

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL & CULTURAL SOCIETY

ԼՐԱՏՈՒ



2017

Forum Հավաք



WWW.HAMAZKAYIN.COM



HAMAZKAYIN FORUM



HAMAZKAYIN_FORUM

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱԻՍՔ
HAMAZKAYIN FORUM 2017

Ֆորումականները՝ իմ ուսանեալէս



Ալեքը բոլորիս մէջ չէր կորսուեր շնորհիւ իր հասակին: T-shirt, short, sneakers, երկար ճերմակ գուլպայ, գլխարկ, արեւու ակնոց, «cool dude» մըն է Ամերիկայէն եկած մեր ընկերը: Ընկերային անձ մը ըլլալով, ան միշտ կը ճոխացներ ֆորումի մթնոլորտը: Առաջին անգամ տեսնելով Զայաստանը, Ալեքը հիացաւ հայրենիքի տեսարժան եւ գեղեցիկ վայրերով, մանաւանդ տեղացի (բնիկ) հայ աղջիկներով:



Վահանը բախտը ունեցաւ մեծ բանաստեղծին դաշնամուրին վրայ նուագել. յիշողութեանս մէջ ամուր կը մնայ այդ պահը, որովհետեւ հիանալի էին մթնոլորտն ու Վահանին նուագը, իսկ հաւաքին երգուած երգերը՝ բոլորիս սրտին հարագատ:

Ընթուշ ու նուրբ **Թամարը**, երկրորդ ամենէն հասակաւոր անձն էր ֆորումի մասնակիցներուն մէջ (իր եղբորմէն ետք): Ան հակառակն է իր եղբոր, կը սիրէ հանդարտ ու խաղաղ կեանքը: Խմբային երգերուն ժամանակ Թամարը լուռ կը հետեւեր ու իր խօսուն աչքերը կ'արձագանգէին իր ամբողջ զգացումները: Մեզմէ ամենէն մեծն ու խելօքն էր:



Վահանը մեր խումբին դաշնակահարն է: Զեսապահայ մեր ընկերը իր կեանքի ամենէն ուրախ շաբաթը անցուց մեզի հետ (ըստ իրեն) իր սիրելի հայրենիքին մէջ, զոր կ'այցելէր առաջին անգամ ըլլալով, հետեւաբար իր վերադարձի օրը տխուր ու անտրամադիր էր: Այլապէս եւ հիացած ըլլալով Զայաստանի գեղեցկութեամբ ու քաղցրութեամբ, ան խոստացաւ շուտով վերադառնալ ու իր ապագան հայրենի հողին վրայ կերտել: Պարոյր Սեւակի տուն-թանգարանին մէջ,



Զայաստանի 5 մասնակիցներէն մէկը՝ **Սիլեսան**, իր աշխատանքին պատճառով չկրցաւ մասնակցիլ որոշ պտոյտներու. թէեւ զինք շատ չտեսայ, բայց առաջին օրէն հասկցայ, որ ան ուղիղ եւ հաւասարակշռուած անձ մըն է: Ապագայ իրաւաբանը, բարեսիրտ ու ազնիւ է ու միշտ պատրաստակամ՝ լուսաբանելու անհասկնալի հարցեր: Զամաշխարհային գրականութեան լաւապէս ծանօթ ու զանազան գիտելիքներու պաշարով մը հարստացած մեր ընկերուիին հաճելի գրուցակից մըն է:

Բոլորին օգնելու միշտ պատրաստակամ՝ **Գառնիկը** մեզի միացաւ Երեւանէն: Ընկերային ու քաղաքավար երիտասարդ մը ըլլալով, ան զիշեր մը մեզի առաջնորդեց դէպի Զասքատ, ուր զուարճալի խաղ մը խաղացինք, ապա հայրենասիրական երգեր երգեցինք:



Նախկին լիբանանահայ **Կերին** այժմ վերջնականապէս հաստատուած է Զայաստան, ուր կը շարունակէ իր ուսումը: Լաւապէս ծանօթ ըլլալով Երեւանի ծակոճուկներուն, ան ստանձնած էր ուղեցոյցի պաշտօնը: Կերին մթնոլորտը ճոխացնող հաճելի ներկայութիւն մըն էր:

Մելանին մեր ֆորումի «fashionista»ն է: Ան մեզի կը զարմացնէ իր գեղեցիկ փէշերով, պայուսակներով ու բարակ կրունկներով: Անուշ ու բարի հոգի մը, կը սիրէ միջնա դարերու քեֆ ընել, պարել ու ցատկել. հետեւաբար կը նեղանայ, երբ Արան ժամ նշանակէ պանդոկ վերադառնալու:

Կրեյս, Արին, Արզնի, Նանոր, Նանե, Արենի, Ճոյ եւ Նարե...

Այս ութ աղջիկները ճեմարանի դասընկերուհիներն են: Նոր չէ, որ ճանչցայ զիրենք: Բոլորն ալ հայրենասեր ու գործունեայ անձեր են. բաւական խանդավառ էին հաւաքին ամբողջ տեւողութեան...

Անժելինան իւրայատուկ է իր խօսելաոճով: Կը խօսի արագ, կը խօսի շատ ու մանաւանդ կը խօսի բարձրաձայն: Մեզի կը խնդացնէ իր ժեսթերով եւ մեկնաբանութիւններով: Կը մասնակցի խանդավառութեամբ եւ իր դրական ուժը կը փո-



խանցէ բոլորին: Ան զօրաւոր աղջիկ մըն է, նպատակասլաց եւ քաջ: Չեմ մոռնար իր առարկութիւնները զարգացման մրցումին ժամանակ... Անժելինան պարտութիւն չի հանդուրժեր:

«Ուր էլ լինես իմ բարեկամ, դու նրա հետ ընկերացիր...»: Բոլորիս սիրելի **Ասատուրը** ժամանած էր հերոսական Արցախէն: Ազնիւ հոգի մը, ան կը պատմէր իր կեանքի փորձառութիւններէն, ու բոլորս ապշած մտիկ կ'ընէինք իրեն: Մասնակցած ըլլալով Ապրիլեան քառօրեայ պատերազմին, ան մեր քաջ ու հայրենասէր ազգակիցն է:



Սեւանային

հետ ծանօթութիւնս կու գայ մանկութեան ու պատանեկութեան օրերէն: Լիբանանի մէջ Զամազգայինի «Կարկաչ» երգչախումբին

մաս կազմելով, պանդոկի սենեկակից եղանք Կիպրոսի մէջ, ուր գացած էինք համերգ տալու: Նոյնպէս բախտը ունեցանք միասին բաժնելու «թագաւորական» սենեակ մը գեղեցիկ պանդո-

կին մէջ Ֆորումի ընթացքին: Բարի, հարազատ եւ անկեղծ ընկերուհի մը սենեակէն ներս թէ դուրս, անմոռանալի գրոյցներով եւ միշտ ու միշտ երաժշտութեամբ լեցուն գիշերներ անցուցինք: Ֆորումի շնորհիւ աւելի եւս մտերմացանք ու վստահ եմ մեր այս մտերմութիւնը երկար ժամանակ կը շարունակուի:

Լիլիթը

կարծես զոյգ քոյրս ըլլար: Թալինէն մեզի միացած մեր գանգրա հեր ընկերուհին, իսկական հայուհիի տիպար մըն է: Զայկական ազգագրական երաժշտութիւն երբ լսէր, որպէս առաջին թեկնածու «բեմը» կը գրաւէր ու ձեռքէս բռնելով ինծի ալ կը մղէր պարելու: Օժտուած է գծագրութեան հրաշալի տաղանդով:



Մեր մէկ հատիկ **Անին** յատուկ սերունի անասուններու հանդէպ: Իւրաքանչիւր պտոյտի հետաքրքրական «ինքնիկ» (selfie) մը ըրաւ հանդիպած անասունին հետ:



Մեր կիպրահայ ընկերուհին իւրայատուկ է նաեւ իր մասնագիտութեամբ. ան թրջագէտ է: Առաջին անգամ ըլլալով կ'այցելէր իր հայրենիքը ու հետեւաբար երջանկութեան արցունքները անբաժան էին իր այնքան խօսուն աչքերէն:

Ամերիկահայ **Վանան** կամ «Պապիկը» ճանչցուեցաւ որպէս կատարեալ խենթ մը բառին բուն իմաստով: Միշտ ուրախ ու վառվռուն, բոլորիս տրամադրութիւնները բարձր կը պահէր իր կատակներով ու սրամիտ խօսքերով: Շատ սիրելով մրցակցութիւնը, հաճելի էր տեսնել զինք, երբ պարտուէր ping pong-ի խաղ մը: Մեծ ուրախութեամբ մասնակից կը դառնար խմբային երգերուն մանաւանդ «Ախպերս ու ես» եւ «Տունն իմ հայրենի» երգերուն ժամանակ:

Ան այն բարեկամն է, որուն հետ քանի մը բաժակ գարեջուր կը խմես ու չես զղշար:



Գարեկը մեր մեջ ամենեն փոքրն ու ամենեն խելթուկն է: Ըլլալով ժիր ու աշխուժ, ան ցատկոտելով կը քալէ, արագ-արագ կը խօսի, ուրախ-զուարթ կ'երգէ ու կը պարէ:



Երբ իրեն ըսենք, թէ մանուկի հոգի մը ունի, ան կը նեղանայ ու կը մերժէ՝ առարկելով, որ պայման չէ մէկը մանուկ ըլլայ, որպէսզի ուրախ ըլլայ: Տուրմի թիւ մէկ երկրպագուն, անոր երջանկութիւնը իր գագաթնակէտին կը հասնի երբ որեւէ տեսակի «chocolate» տեսնէ: Հակառակ իր խելթութիւններուն, ան ազնիւ ու բարեսիրտ է, ու իրեն կը պարտինք մեր գեղեցիկ լուսանկարները:

Վանան խելացի ու խորհրդաւոր անձ մըն է: Ունենալով քննական միտք, ան յաճախ հարցականի տակ կ'առնէ դասախօսներուն ուղղած հարցումներն ու անոնց բացատրութիւնները: Պատմութեան ուսանող ըլլալով, ան կ'արդարացնէ այս յատուկ գիծը: Լաւ պատմաբանը միշտ պետք է խուզարկէ, պեղէ, վերլուծէ, մտածէ եւ վստահ եմ, որ Վանան կը դառնայ լաւ պատմաբան մը:

Մեծ ժողովրդականութիւն վայելող, բոլորին սիրելի **Զէյթինը** եկած է Ֆրանսայէն: Կեանքը, քէֆը եւ խնձորով «vodka»-ն սիրող ընկերուիին չի կրնար հանդուրժել կանուխ աւարտող գիշերները, պարել-ցատկել չընդգրկող գիշերները եւ եր-



կար դասախօսութիւնները: Բոլորէն աւելի ան կը սիրէ իր քրոջը տղան՝ Ալեքսանտրը: Կրնամ վստահեցնել ձեզի, որ իրմէ աւելի խենթ, ուրախ եւ վառվառ անձի մը անկարելի է, որ նորէն հանդիպիմ: Ան կը յիշուի իր «ah bah ouais» խօսքով, որով կ'եզրակացնէ գրեթէ ամէն բան:

Եթէ **Զէյթինը** մեր հաւաքին խենթ «parisienne»-ն էր, ապա **Շողիկն** ալ երջանիկ «marseillaise»-ն է: Անոր ծնողքը լիբանանցի ըլլալով, ան լաւ ծանօթ է լիբանանեան ուտելիքներուն, եւ կրնամ ըսել, թէ լիբանանահայէ մը աւելի արաբերէն երգ կ'ունկնդրէ: Ունի իւրայատուկ խն-




դուք մը եւ հետաքրքրական շարժումներ: Շատ հաճելի է, երբ ֆրանսական շեշտով անգլերէն երգէր: Իր զօրաւոր անհատականութեան կողքին, ան ունի զգայուն սիրտ մը: Մարսելի Համազգայնի Ճեմարանի ֆորումի մրցանակակիրը՝ Շողիկը, մանրամասն ներկայացուց իր դպրոցը գաղութներու ծանօթացման օրը: Մեր գիշերային քէֆերը առանց իրեն ամբողջական պիտի չըլլային:

Մարմանդն ու Ծովակը ֆորումին անբաժան տատրակներն էին: Համարձակ ու զօրաւոր, անոնք կը պայքարին պաշտպանելու համար իրենց իրաւունքները: Հալէպահայ մեր ընկերուիիները,



հայրենասէր հայուիիներ են, իրենց գաղութին մէջ գործունէայ եւ ծառայասէր անձեր: Մարմանդը ունի նշածել խօսուն աչքեր եւ ազնիւ հոգի մը, իսկ Ծովակը գեղեցիկ ու անկեղծ ժպիտ մը: Ուրախ եմ, որ իրենց նման երիտասարդներ ամուր եւ կանգուն կը պահեն Սուրիոյ հայկական գաղութը:

Կորիւնը ընկերային, սրամիտ եւ ազնիւ անձնաւորութիւն մըն է: Գալիֆորնիայէն եկած, բոլորիս շատ սիրելի Կորիւնը իր զուարճալի կատակներով ու բարձրաձայն խնդուքով կը վարակէր բոլորս ու մթնոլորտը ալ աւելի հաճելի կը դարձնէր: Այնպէս մը զգացի, թէ երկար տարիներու ընկերներ ենք ու կասկած չունիմ, որ երկարատեւ պիտի շարունակուի մեր բարեկամութիւնը: Եթէ յարգէ իր խոստումը, գալ տարի Լիբանան պիտի գայ («իշալլա») ու միասին պիտի շարունակենք լաւ յիշատակներ ունենալ:



Ձախիս Կորիւնը, իսկ աջիս **Նազոն**, մանկապարտեզէն մինչեւ երկրորդական ճեմարանի դասընկերս եղած է, խելօք եւ կատակասէր տղայ մը:

Հրակը քիչ մը ուշացած հասաւ ֆորումի առաջին գիշերը, սակայն այդ մէկը արգելք չեղաւ, որ ան շուտով մթնոլորտին մէջ մտնէ ու բոլորիս սիրելի Հրակը դառնայ: Հասածին պէս, իւրաքանչիւրիս հետ մէկ-մէկ ձեռնուեցաւ ու համբուրեց. այդպիսով մեծ տպաւորութիւն ձգեց բոլորիս վրայ: Զաղաքավար, ազնիւ ու բարեսիրտ գանատահայ մեր ընկերոջ հետ անսման օրեր անցուցինք: Իսկ գալով մեր գիշերային քեֆերուն, հաճելի էր Հրակին ներկայութիւնը «pub»երուն եւ «club»երուն մէջ, երբ ամերիկեան պարային շարժումները («white guy moves») կապկելով, «dab» ընելով կը խնդացներ մեզի: Կենս'ցոյ Հրակ...



Իր անունին նման հետաքրքրական երիտասարդ մըն է գանատահայ **Արշէնը**: Արշէն՝ արեւով շինուած... Ֆորումի լաւագոյն ընկերներէս մէկը, ան իր գիտելիքներու հսկայ պաշարով եւ անկաշկանդ ոգիով կը հիացներ ինծի: Դասական



երաժշտութեան հանդէպ սերն ու յատկապէս ջութակ նուագելը մեր երկուքին հասարակաց գիծերէն մէկն էր: Ազնաւորի եւ Claudio Baglioni-ի սիրահար, ան ունէր նաեւ այլազան հետաքրքրութիւններ: Մարգականէն մինչեւ հնէաբանութիւն եւ պատմութիւն, որուն մէջ պիտի մասնագիտանայ: Համակրելի Արշէնին հետ անցուցած ուրախ օրերս անջնջելի պիտի մնան յիշողութեանս մէջ:

Գանատահայ **Թամարը** այնքան քնքուշ ու բարի անձ մըն է, որ իրեն պէս ընկերուհի մը ունենալը բախտաւորութիւն է: Ան



«աղջիի՛կ» ըսելով կը մօտենար ինծի, ու միասին երկար գրոյցներ կ'ընէինք: Այնքան մտերմացանք, որ կարծես քոյրեր ըլլայինք: Երբ ֆորումը վերջ գտաւ, մինչեւ իր Գանատա մեկնումը միասին շարու-նակեցինք վայելել հայրենիքը եւ մանաւանդ Երեւանէան գիշերները: Կը վստահեցնեմ ձեզի, որ Վարդավառի տօնը շատ աւելի հաճելի կը դառնայ, եթէ Թամարին հետ անցընես: Ան պայքարի մէջ էր, որպէսզի չթրջուի սակայն բոլորս գիտէնք, որ այդ օրը չոր մնալը բաւական դժուար է...



Գալով ինծի, ով եմ ե՞ս... Ճիշդ չէ, որ ես իմ մասին խօսիմ, այդ մէկը կը ձգեմ սիրելի ընկերներու: Հաճելի պիտի ըլլայ լսել իրենց մեկնաբանութիւնները: Առիթը յարմար գտնելով կ'ուզեմ խորին շնորհակալութիւններս յայտնել Համագգայինի Կեդրոնական վարչութեան, որ այս ոսկի առիթը ընծայեց ինծի մասնակցելու համար 2017 Ֆորումի հաւաքին: Ճեմարանի երկրորդական բաժնի վերջին 3 տարիներու հայերէն լեզուի եւ հայերէնագիտական սիւթերու բարձրագոյն միջինը ապահովելով արժանացայ ԿԿ-ի մրցանակին:



ՆԱՐՈՏ ՍԵՐՈՒԺԵԱՆ
Լիբանան

Connect with ընկերներ

Although I was born and raised in the diaspora, I have never ceased to feel connected to my ancestral homeland, Armenia. I am continuously learning Armenian, exploring its history and singing revolutionary songs with the hope that one day justice will prevail and more Armenians will live in Armenia than the diaspora. I will move to Armenia soon, but regardless, I have a duty to develop a meaningful bridge between Armenia and the diaspora. I currently live in the United States, but the Armenian diaspora is not merely in the U.S. This is why I was so drawn towards Hamazkayin Forum, a two-week program that unites young Armenian students from all over the world.



Hamazkayin Forum allows one to connect with ընկերներ from different countries including some that Armenians rarely visit. Each ընկեր defines Armenian identity distinctively, and it is so interesting that the ընկերներ from the same countries also vary in perspective. Regardless, the participants create strong bonds as they fulfill each other's voids in Armenian identity. These strong bonds are significant to ideally strive as a global diaspora towards building better relationships with the Armenians living in Armenia, and towards creating a more sustainable and cosmopolitan Armenia ՎՆ attracting more tourists.



Aside from the unforgettable excursions, spectacular sightseeing, and most importantly, superb hospitality, Hamazkayin Forum offers educational events (e.g. lecture at AUA, seminar with Artsakh's vice president, etc.), activities (e.g. sport competitions, ceramic lessons, etc.), and meals at unique spots like at a rustic village home, all of which an ordinary tourist would probably be unable to organize. This implies that even if one has been to Armenia multiple times, Hamazkayin Forum is a unique program that is ought to be experienced.

VANA GEREGIAN
USA

14 Անմոռանալի օրեր

8 Յուլիս 2017: Անհամբեր ու խանդավառ այս յատուկ թուականը՝ մեր Ֆորում հաւաքին առաջին օրը կը սպասէի: Կեսօր էր, երբ հասանք հայրենիք, եւ հրաշալի փորձառութիւն մը սկիզբ առաւ:

Ֆորումին ընթացքին այցելեցինք մշակութային, պատմական, զբօսաշրջային, կրթական ու մարզական վայրեր, հարստացուցինք մեր գիտելիքները, ինչպէս նաեւ ապրեցանք տարբեր տեսակի զգացումներ: Կ'արժէ յիշել ամենէն յատկանշական պահերէն քանի մը հատը:

Սկսինք Զիւանիի աշուղական դպրոց այցելութեամբ, ուր, «ensemble»-ի փորձասնեակին մէջ նստած, առիթը ունեցանք ունկնդրելու եւ վայելելու հայ աշուղական գործերը: Երբ մեզի ծանօթ

երգեր լսեցինք, ընկերակցեցանք նուագախումբին: Այդ ժամանակ սկսայ մտածել, թէ հայ մշակոյթը որքան անհրաժեշտ է հայապահպանման համար: Փաստօրէն, հակառակ անոր որ մեզմէ իւրաքանչիւրը մեծցած է տարբեր երկրի մը մէջ, հայկական մշակոյթը մեր ինքնութեան մաս կը կազմէ եւ ձեռով մը մեզ հայ կը պահէ:

Այցելեցինք նաեւ Կոմիտասի թանգարանը: Մեծ հետաքրքրութեամբ շրջեցանք եւ ծանօթացանք բաժանմունքներուն: Իբրեւ դաշնակահար,





Նութիւնը կեանքի դժուար պայմաններու մէջ կ'ապրէր, սակայն անոնք մեզի հետ քէֆ ըրին ու զուարճացան: Շատ ազդեցիկ էր այն պահը, երբ փոքրիկներէն մէկը իր պատրաստած ապարանջանը ինծի նուիրեց: Կրկանք եզրակացնել, թէ ան որքա՛ն ուրախ էր մեր ներկայութեամբ եւ կ'ուզէր յատուկ ձեւով մը իր երախտագիտութիւնը արտայայտել:

Վերջապէս, կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել մեր բոլոր պատասխանատուներուն, որոնք այս հաւաքը կարելի դարձուցին ու գեղեցկացուցին: Գալով մեզի՝ ֆորումականներուս, մենք դարձանք մէկ համաշխարհային ընտանիք: Իսկապէս հրաշալի էին այդ օրերը: Արդեօք իրական էին, թե՞ երազ...

ՍԵՐԱՆԱ ՊՈՅԱԾԵԱՆ
Լիբանան

հմայուած էի Կոմիտասով, իր երգերով ու հանճարով: Կոմիտաս վարդապետ հայ երգի Մեսրոպ Մաշտոցն է, ու անոր ձգած աւանդը՝ անմահ: Այս այցելութիւնը շատ տպաւորիչ էր:

Մտքիս մէջ դրոշմուած կը մնան «Ս. Տիրամայր Զայաստան» ճամբարին մասնակիցները, որոնք ջերմօրէն մեզ դիմաւորեցին եւ շատ արագօրէն մեզի հետ մտերմացան: Թէեւ անոնք մեծամաս-



Ապրիլի երկրորդ օրն էր, երբ մօրս հետ խօսելու ընթացքին ստացայ հայրենիք մեկնելու ուրախ լուրը: Այդ վայրկեանէն սկսեալ կը հաշուէի օրերն ու վայրկեանները...

8 յուլիս 2017-ին հայրենիքը իր լայն թելերը բացած՝ գրկեց Համագգայինի երիտասարդներս: Մայր Հայաստանը իր տաքուկ փաթթուկով վերջապէս մարեց տարիներու մեծ կարօտիս կրակը:

Աչքերուս չէի հաւատար: Բոլոր տեսածներս կարծես երազ ըլլային: Դպրոցական տարիներուս լսած պատմութիւններս ու մտքիս մէջ ընդգծուած պատկերները կը տեսնէի, կը շօշափէի ու կը զգայի:



Հայրենիքի իւրաքանչիւր անկիւն հայկականութիւն կը բուրեր՝ իր ճարտարապետութեամբ, երաժշտութեամբ ու բնութեամբ: Անսահման գեղեցկութիւն կը տիրէր ամբողջ տարածքին: Իւրաքանչիւր վայր կարծես գեղանկար մը ըլլար՝ գծուած հայու ստեղծագործ ձեռքերով ու մտքերով, որոնց նմանը մարդ արարած պիտի տեսնէ ո՛չ աշխարհին վրայ եւ ո՛չ ալ աշխարհէն դուրս:

Մարդոց լեզուներու արտասանութեամբ ականջներս կը վայելէին այբբենական տառերը: Ջուրերը ամէն կողմ կը հոսէին՝ հպարտ իրենց հայկականութեամբ: Երկինքը կապոյտ ու ծաղկածել ամպերով զարդարուած էր:



14 թանկագին օրեր անցընելով Հայաստանի ու Արցախի մէջ՝ ըմբռնիւնեցի գեղեցկագոյն պատկերները, ստացայ հարուստ գիտելիքներ եւ ապրեցայ ընկերային թանկարժէք պահեր: Իւրաքանչիւր վայր իր քաղցրութեամբ ու սրբութեամբ մեզի ընծայեց անմոռանալի ապրումներ ու յիշատակներ: Այդ բոլորը տեսնելն ու շօշափելը տարբեր զգացումներ էին, զորս չեմ կրնար բացատրել տողերու ու բառերու ընդմէջէն: Լաւագոյն զգացումները այնտեղ կ'ապրէի, մանաւանդ երբ պահ մը կը փակէի աչքերս ու Արցախի բնութեան բոյրը եւ հողը շնչելով՝ կը ստանայի ուժ ու ներքին հանգստութիւն:

Մեր հայրենիքը հայութեամբ տոգորուած մանուկին, պատանիին, երիտասարդին ու ծերունիին դրախտավայրն ու յաւիտենականութիւնն է: Մեր լեզուն երբ հրաշագեղօրէն հնչէ կամ մեր ականջները անոր դուրեկան հնչիւնները լսեն, անպայման, ո՛ր որ ալ ըլլանք, մեր միտքն ու հոգին ընդմիշտ պիտի սաւառնին դէպի դալար ու կանաչագարդ պարտեզները, մեր հոգիները պիտի լեցուին հոգեպարար երաժշտութեամբ, վարդերու ու շուշաններու բուրումնաւետ հոտով: Պիտի հասնիք Արարատի բարձունքին՝ մեր հազարամեայ հարուստ պատմութեան: Պիտի տեսնենք մեր աչքերուն ամօքէ



հպարտութիւն ու մեծութիւն ներշնչող մեր հերոսներուն գեղեցիկ ու հզօր պատկերները, պիտի շնչենք անոնց արեան հոտը եւ պիտի լսենք անոնց կրակոցներու ձայնն ու յաղթանակի երգերը:

Իմ մա՛յր հայրենիք, մեծ ժպիտ դեմքիս եւ արցունք աչքերուս՝ կը մեկնիմ սփիւռք: Արցունք, որովհետեւ կարօտի կրակը կը վառի սրտիս մէջ: Կը ժպտիմ, որովհետեւ կը հաւատամ, որ այս մէկը ժամանակա-



Լոր Է: Որպես հայ զաւակդ, ո՛ր որ ալ ըլլամ, կարօտին չդիմանալով, պիտի վերադառնամ մօտդ ու պիտի գրկեմ քեզ այնքան ամուր, որ արծուաբոյն թելերդ պիտի դառնան իմ տունս եւ հոգիս իր թելերը բացած՝ մեծ հպարտութեամբ պիտի սալառնի կրկին անգամ Արարատի գագաթը:

* * *

Շնորհակալութի՛նն Համազգային Ֆորումի կազմա-

կերպիչ յանձնախումբին, որուն տարած հսկայական աշխատանքով աշխարհի տարբեր երկիրներէ հայ զաւակներ հայրենիքի գիրկը համախմբուեցան, որպէսզի իւրաքանչիւր հայ ուսանող հայրենիքի շունչը ստանալով՝ իր կեանքի լաւագոյն օրերը անցընէ մայր հողին վրայ ու զօրացնէ իր հայկական ոգին: Նաեւ՝ շնորհակալութի՛նն Զեսապի Համազգայինի «Համօ Օհանջանեան» մասնաճիւղի վարչութեան, որ եղաւ հայրենիքը տեսնելու երազիս իրականացման աղբիւրը: Բոլորին վարձքը կատա՛ր:

ՎԱՀԱՆ ՍԱՐՏԸՃԵԱՆ
Սուրիա

Երազային Հայրենիքը

Համազգայինի Forum-ը անկիւնադարձային պահ մըն էր ինծի համար որ առիթը ընծայեց այցելել երազային Հայրենիքը:

Հանդիպիլ, շփուիլ սքանչելի մարդկանց հետ եւ այցելել տեսարժան վայ-

րեր, որ կ'արժէ ամէն հայ երիտասարդ տեսնել, վայելել եւ հպարտ զգայ իր Հայրենիքով:




Ամէն մի վայր թարմ պիտի մնայ յիշողութեանս մէջ բայց՝ Արցախը յատուկ տեղ գրաւեց սրտիս մէջ...զգացի հայու արիւթիւնը, խիզախութիւնը եւ հզօրութիւնը:

Սրտագին շնորհակալութիւններս Համազգայինի մեծ ընտանիքին:

ԾՈՎԱԿ ՍՈՂԱՆԵՄԵՉԵԱՆ
Սուրիա





ԿԵԱՆՔԻՍ ԱՄԵՆԷՆ ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

Նախ խորին շնորհակալություններս կը յայտնեմ Համազգայինի Կեդրոնական վարչության եւ տիկ. Շուշիկ Արսլանեանին, որ առիթ ընծայեց ինծի մասնակցելու Համազգայինի 2017-ի Ֆորումին, որուն ընթացքին ապրեցայ կեանքիս լաւագոյն եւ անմոռանալի պահերը:

Անշուշտ կը խոստովանիմ, թէ ասիկա առաջին անգամը չէր որ, կ'այցելէի Հայաստան: Մասնկութեանս՝ դպրոցի դասընկերներով գացած էի եւ այդ իսկ պատճառով սկիզբը շատ խանդավառ չէի, որովհետեւ



համալսարանի դասերուս արձանագրությունները եւ ուսումնս արագ վերջացնելու գաղափարը ինծի համար առաջնահերթ էին, քան՝ երթալ եւ այցելել Հայաստան, բոլորովին օտար մարդկանց հետ. սակայն վերջաւորութեան ծնողքիս քաջալերանքով համաձայնեցայ: Իսկ երբ Հայաստան հասայ եւ սկսայ կապ հաստատել մասնակցողներու հետ, բոլորովին տարբեր էր այն գաղափարէն եւ զգացումէն, զորս ունէի մտքիս մէջ: Շատ ուրախ էի տուած որոշումիս համար. այս անգամ սկսայ հեռաձայնել ծնողքիս՝ խնդրելով երկարաձգել կեցութիւնս. զարմանալիօրէն չէի մտածեր դպրոցիս արձանագրություններուն մասին, կ'ուզէի վայելել

հայրենիքս, նոր ընկերներս, յագեցնել ծարաւս, զոր բնաւ չէի զգացած այսքան տարիներէ: Սակայն խնդրանքս անշուշտ անհնար էր. եւ օր մըն ալ կարծես միտքս կարդացած էին մեր պատասխանատուները, երբ տարին մեզ Հայաստանի ամերիկեան համալսարանը, որ տեսնենք անոր գործունեութիւնը: Ուրախութիւնս անսահման էր, եւ սկսայ հարցնել բոլոր այն հարցումները, զորս կը հետաքրքրէին զիս, ի մասնաւորի ընտրած ճիւղիս վերաբերեալ, որպէսզի վերադառնամ Հայաստան, հաստատուիմ եւ ուսումնս շարունակեմ հոն՝ եւ, ինչու չէ, հետագային օգտակար դառնամ ժողովուրդիս եւ հայրենիքիս. սակայն դժբախտաբար ներկայիս կարելի չէ իմ ընտրած ճիւղս շարունակել հոն...:

Հոն զգացի, թէ ինչ ըսել է ՀԱՅ ԸՆԿԵՐ, զգալ հայօրէն. այնպէս չէր երբեք, որ այցելած էի երկիր մը եւ կը վայելէի անոր տեսարժան վայրերը, ընդհակառակը, հոն զգացի մեր մշակոյթի ճոխությունը, մեր երկրի գեղեցկութիւնը, ժողովուրդին հարազատութիւնը, որուն մասին մայրս միշտ կը խօսեր, իսկ ես միտքէս՝ «Լա՛ւ, հասկցայ», կ'ըսէի, եւ այդ պահուն իսկ կը թռեր մտքէս:

Ֆորումի պատճառով աւելի ծանօթացայ մեր պատմութեան, մշակոյթին եւ նամանաւանդ մեր ժողովուրդի անցեալի տառապանքներուն եւ ներկայի դժուարութեանց, ինչ որ աւելի ամրապնդեց ինքնութիւնս: Ծանօթացայ ընկեր-ընկերուիներու, մինչեւ օրս չէ խզուած





մեր կապը, եւ վստահ եմ, որ պիտի շարունակուի մինչեւ վերջ:

Կը վստահեցնեմ, որ մասնակցած ծրագիրներէն Համազգայինի այս ծրագիրը ամենէն բացառիկ ծրագիրն էր, զոր իւրաքանչիւր մասնակցող ապրած է իր կարգին, ինչպէս

ես, եւ զայն պիտի յիշեմ մինչեւ կեանքիս վերջը, որովհետեւ մէջս ձգեց հետք մը, զոր կարելի չէ բառերով բացատրել:

Դարձեալ շնորհակալութիւն կը յայտնեմ Համազգայինի վարչութեան եւ բոլոր անոնց, որոնք առիթ ընծայեցին ինծի այս հրաշալի փորձառութիւնը վայելելու՝ յուսալով, որ կը շարունակուի այս ծրագիրը եւ ինծի նման ուրիշներ եւս կը բախտաւորուին եւ կը վայելեն ընծայուած այս առիթը:

ԿՈՐԻՆ ԿԷԼՈՅԵԱՆ
Քանադա

Սովորական պտոյտ մը չէ՛ր

Ընդամենը հեռաձայնի մը զանգ էր, որ երազ մը իրականացուց:

«Այս տարի քեզ նկատի առած ենք որպէս մասնակից Համազգայինի տարեկան ֆորումին. կը փափաքի՞ս: 15 օրեր, Հայաստան եւ Արցախ»:

Առանց տատամսելու իսկ, ես ալ չյուսացի այն դրական պատասխանը, որ արագօրէն դուրս եկաւ:

«Այո՛»:

Հեռաձայնային խօսակցութիւնը աւարտելէն ետք էր, որ անդրադարձայ, թէ ինչ էր պատահածը: Շտապեցի մօտ քով, որ զինք ալ տեղեկացնեմ անսպասելի լուրին մասին:

Բայց.. բայց ես նոյն շրջանին պետական համալսարանի քննութիւններ ունիմ, յանկարծ այս յիշելով արդէն վայրկեան մը բոլոր դռները փակ էին դիմացս.. ինչպէս վեց տարի է ի վեր յարմար առիթ մը բնաւ չէր ընծայուած պտոյտի նպատակով Հալէպ քաղաքէն դուրս գալու:

Բայց սովորական պտոյտ մը չէ՛ր.. իմ երազային հայրենիքս էր, որ քսան տարի լոկ պատկերներով, յօդուածներով եւ տեղեկութիւններով ծանօթ էր:



Որոշումս վերջնականապէս տուած էի՝ պիտի երթամ:

Սպասուած օրը հասած էր արդէն..

Յուզմունքի եւ ուրախութեան խառն զգացումները հոգիս պատեցին այն վայրկեանէն իսկ, երբ մուտք գործեցի «Չուարթնոց» օդակայան:

Եւ սկսան լաւագոյն տասնհինգ օրերը հայրենիքի գրկին մէջ:

Իւրաքանչիւր օր որ կ'անցներ, մէկը միւսէն տարբեր կը թուէր, մէկը միւսէն յատուկ եւ մէկը միւսէն յիշատակելի. կը հարստանայի պատմական, մշակութային եւ աշխարհագրական գիտելիքներով:

Անվիճելի իրականություն մըն է, թէ սփիւռքի մէջ իւրաքանչիւր հայու մտքին մէջ դրոշմուած է Հայաստանի գոյութիւնը իբրեւ սեփական հայրենիք, սակայն այս այցելութիւնս այն փաստը եղաւ, որ բոլորովին տարբեր միտքեր էին հեռուէն երազելն ու հայրենիքը զգալը իր հայկական պատմութեամբ ու գեղատեսիլ եւ յիշարժան վայրերը վայելելով:

Իւրաքանչիւր վայր ունէր տպաւորիչ ազդեցութիւն մը, բայց ինծի համար տարբեր եղաւ ամենահեքիաթային եւ ազնուագոյն՝ մեր Արարատ լեռան տեսարանը, որուն դիմաց կարելի էր ժամէ՛ր ու ժամեր անթարթ աչքերով անկուշտ մնալ, սակայն՝ «Պիտի գնանք վաղ թէ ուշ.....»:

Նաեւ խիզախ Արցախը եղաւ բոլորովին տարբեր պատմութիւն մը:

«Ազատ Արցախը ողջունում է ձեզ»: Արդէն այս նախադասութիւնը բաւարար էր, որ մարմինս փշաքաղի՝ յիշելով մեր առիւծասիրտ ազատամարտիկները, որոնք իրենց արդար պայքարով հայութեան պարգեւեցին արժանաւոր կեանք մը, որով հպարտ պիտի զգայ իւրաքանչիւր ՀԱՅ:

Փափաքս է, որ բոլոր անոնք, որոնք տակաւին չեն տեսած հայրենիքը, ունենան յարմարագոյն առիթը, որովհետեւ ամէն հայ անհատ արժանի է այցելելու մեր հրաշք հայրենիքը:

Ու ես առանձնաշնորհում ունեցայ ինծի ընծայուած այս առիթով, շնորհիւ Համազգայինին: Գնահատելի եւ ձեր աշխատանքները:



ՄԱՐՄԱՆԹ ԱՇՈՏԵԱՆ
Սուրիա

Motherland with friends

A trip to Armenia can never fail to amaze, to instruct, and to inspire the young diasporian. Whether young people choose to visit their motherland with friends, with family, or with a certain organization, being on Armenian soil surrounded by Armenian people inevitably gives them a feeling and an experience unlike any other.



Visiting Armenia with Hamazkayin Forum, however, provided me with opportunities to experience so much more than I ever thought possible. I had already visited Armenia with Homenetmen scouts at the 2014 Jamboree, and therefore had the chance to see most of Armenia's usual attractions. Still, Hamazkayin Forum presented such amazing perspectives

that made exploring the country very special.

The program seemed to be designed to make participants fall in love with Armenian culture. I was exposed to purely Armenian food and music every moment and had the chance to learn adequately about Armenian architecture, religion, art, and dance everyday.

As with any group trip, the friendships made during the Hamazkayin Forum were and remain sacred to me. I once again made strong bonds with people who live so far away, but who somehow share my culture and my love for my country.

I am so very appreciative of the impact the Hamazkayin Forum has left on me. When the program ended, I was reminded of the beauty of my country and was left proud and honoured of my roots like never before. I have nothing but love for all the people who are part of the program and hope to collaborate with Hamazkayin in the future.



Melanie Tashdjian
Canada